



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

27.03.2021թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՄԵՍՐՈՊ ՄԵՍՐՈՊՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԿԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Այսօր Թատրոնի միջազգային օրն է, ինչի կապակցությամբ շնորհավորում եմ թատերական աշխարհի բոլոր գործիչներին՝ սկսած դերասաններից, ռեժիսոր-բեմադրողներից մինչև կուլիսներում և տոմսարկղերում աշխատողներից. դուք բոլորդ եք մեզ համար ստեղծում թատրոնը:

Կոտայքի մարզում թատերական կյանքում աշխույժ անցուդարձ է: Ներկայացումների և լեվի-լեցուն դահլիճների պակաս չկա Հրազդանի և Աբովյանի դրամատիկական թատրոններում, Չարենցավանում և Հրազդանում գործող տիկնիկային թատրոններում, պարբերաբար բեմադրություններ են լինում նաև տարբեր համայնքների մշակութային տներում:

Ինչպես բոլոր ժամանակներում, այսօր էլ թատրոնն ապահովում է մեր կյանքի մշակութային ռիթմը, և մենք պետք է գործի դնենք մեր ներուժը համայնքներում մշակութային կյանքն առավել զարգացնելու համար:

Կրկին շնորհավորելով մասնագիտական տոնի առթիվ՝ մաղթում եմ ձեզ քաջառողջություն, երջանկություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Որպես թատերասեր՝ շնորհակալություն եմ ձեզ հայտնում մեր գերհոգնած աշխատանքային երեկոները գունավորելու համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Մ.ՄԵՍՐՈՊՅԱՆ